ՀՀ Սահմանադրության նախագիծ

(Փոփոխություններով, լրացումներով, նախագահական

«Բ» տարբերակ)*

ՊՐԵԱՄԲՈՒԼԱ (Նախաբան)

Հայ ժողովուրդը, հենվելով իր ազգային-պատմական տարածքում ինքնորոշվելու անկապտելի իրավունքի վրա, նպատակ ունենալով ստեղծելու ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն բազմակացութաձև սեփականության հիմքի վրա. հավաստելով իր հավատարմությունը համամարդկային առաջավոր նվաճումներին ու հայ ժողովրդի ազգային-պատմական արժեքներին, ազդարարելով իր աներեր ձգտումը միջազգային խաղաղության պահպանման և խաղաղ գոյակցության սկզբունքների ամրապնդման գործում, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը.

ԳԼՈՒԽ I

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունը անկախ, նախագահական հանրապետություն է:

ՀՀ տնտեսական հիմքն են կազմում արտադրության միջոցների.նյութական և հոգևոր համընդհանուր բարիքների նկատմամբ բազմակացութաձև սեփականության վրա հիմնված արտադրատնտեսական հասարակական հարաբերությունները:

ՀՀ սոցիալական հիմքը իրավական լիիրավ հավասարության և սոցիալ-տնտեսական փաստական. հարաբերական հավասարության բնական ու բանական հիմքի վրա խարսխված հասարակական բոլոր խմբերի, դասակարգերի դաշինքն է:

ՀՀ քաղաքական հիմքը ժողովրդաիշխանությունն է՝ այդ հիմքի վրա ձևավորվող ու

* 2001 թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից լույս տեսած մեր «Հայկական առաջին Սահմանադրությունը…» աշխատության մեջ մեր կողմից կազմվել և որպես հավելված ներկայացվել է սահմանադրության նախագծի խորհրդարանական և նախագահական կառավարման տարբերակները՝ այս նախագիծը նշված աշխատության մեջ ներկայացված նախագահական կառավարմամբ սահմանադրության նախագծի մեր կողմից հետագայում փոփոխությունների և լրացումների ենթարկված տարբերակն է՝ 2010 թ. ևս կատարված մի շարք լրացումներով և փոփոխություններով: Ներկայացված բոլոր օրինակներում էլ *հիմնական բովանդակությունն* ու *սկզբունքները* անփոփոխ են մնացել:

գործող՝ անմիջապես ժողովրդի կողմից ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրության սկզբունքով ընտրվող ժողովրդի իրական վերահսկողության տակ գտնվող պետական, քաղաքական մարմինների համակարգը**:

Օրենսդիր, գործադիր և դատական իշխանություն իրականացնող բոլոր բարձրագույն և տեղական՝ ղեկավար պաշտոնատար անձինք ընտրվում են որոշակի ժամկետով և կարող են օրենքով նախատեսված հիմքերով վաղաժամկետ ետ կանչվել անմիջապես ժողովրդի կողմից:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետությունում իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է: Ժողովուրդն ի բնե օժտված է վերսահմանադրական իրավունքով՝ այդ թվում. փոխելու երկրի Հիմնական օրենքը, ստեղծելու իր ցանկացած պետական և տնտեսական կարգը, պետական կառավարման ձևը: Երկրի հիմնական օրենքի ընդունումը, փոփոխումը, պետական կառավարման ձևի, տնտեսակարգի փոփոխումը և ներպետական ու արտաքին քաղաքական կյանքի մյուս՝ առավել կարևոր հարցերը կարող են լուծվել միայն համաժողովրդական քննարկման ու քվեարկության միջոցով: ՀՀ տարածքը, ինչպես և Հայկական պետական միավորման վերահսկողության տակ գտնվող հայ ժողովրդի ազգային- պատմական տարածքը չի կարող փոքրացվել, նվազեցվել և փոխանակվել առանց համաժողովրդական քննարկման և քվեարկության: ՀՀ իշխանության բարձրագույն մարմիններն իրավասու չեն առանց համաժողովրդական քննարկմամբ և քվեարկությամբ արտահայտված ժողովրդի կարծիքի միջազգային-իրավական և այլ եղանակներով ինքնուրույն լուծելու հայ ժողովրդի ազգային-պատմական հիմնախնդիրներն ու դրանց առնչվող հարցերը*:

Հիմնական և ոչ հիմնական օրենքներն ընդունելիս պետք է խստորեն հաշվի առնել ժողովրդի՝ նրա փաստական մեծամասնության իրական կամքը, կարիքները, օբյեկտիվ պահանջները. մարդու, քաղաքացու կյանքի. գոյության իրավունքից բխող, ինչպես լիակատար իրավահավասարության, այնպես էլ սոցիալ-տնտեսական հարաբերական. փաստական հավասարության, ազատության ու բնական իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքները: Պետական, սոցիալ-տնտեսական կառույցները, օրենքներն ու մյուս իրավական ակտերը պետք է ստեղծվեն և ընդունվեն այն հարաբերությունների բազմակողմ սոցիոլոգիական ուսումնասիրությունից հետո, որոնք պետք է կարգավորվեն տվյալ օրենքներով, և որոնցում պետք է գործեն ստեղծվող կառույցները: Ընդուն-

---

** Մեր հայտնի պատմաբան-գիտնական և հասարակական-քաղաքական գործիչ *Ռաֆայել Համբարձումյանը* խորհուրդ է տալիս Սահմանադրության տեքստում՝ բուն տեքստում կամ նախաբանում «բացել» «Հայաստան» և «Հայաստանի Հանրապետություն» հասկացությունների բովանդակային-տերիտորիալ սահմանները. կարծում ենք, որ դա ուշագրավ գաղափար է և ըստ հնարավորին պետք է հաշվի առնվի *նոր* Սահմանադրության ընդունման հնարավոր գործընթացում. համենայնդեպս այստեղ մտածելու բան կա. – Մ. Թ.):

* Այդպիսի հիմնախնդիրներ էին շոշափում օր.՝ 2009 թ. Հայ-թուրքական օգոստոսյան՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 12.01. 2010 թ. որոշմամբ օրինական ճանաչված համաձայնագրերը, որոնցով ըստ էության օրինական է ճանաչվում հայկական բնապատմական տարածքները զավթած և հայերի ցեղասպանությունն իրականացրած թուրքական պետության գոյությունը. նաև անհիմն կերպով, կամա թե ակամա կասկածանքի տակ դնում մի շարք այլ պատմական իրողություններ… Նույն վիճակն է Արցախ-Ղարաբաղի հարցում-Մ. Թ. 17.10.2025թ.:

վող օրենքները չպետք է հակասեն մարդու բանական ու բնական բնությանն ու հասարակական իրական՝ ընդհանրական շահերին:

Հոդված 3. Համաժողովրդական քվեարկության արդյունքները վավերական են ճանաչվում, եթե քվեարկությանը մասնակցել են ՀՀ-ում ընտրելու իրավունք ունեցող, ընտրության պահին գրանցված բոլոր քաղաքացիների ոչ պակաս երկու երրորդը: Քվեարկության արդյունքները որոշվում են ձայների պարզ մեծամասնության (երկու երրորդից) սկզբունքով: Սահմանադրությունը կամ նրանում փոփոխությունները ընդունվում են հատուկ՝ սույն Սահմանադրության 79 հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 4. ՀՀ նախագահը, Ազգային ժողովը, Սահմանադրական դատարանը, առաջին ատյանի դատարանները, մարզպետները, տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են անմիջապես բնակչության կողմից ուղղակի, ընդհանուր, հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, սույն Հիմնական օրենքի երրորդ հոդվածում նախատեսված ընտրաչափանիշներով (2/3-ի, կամ, գոնե ընտրելու իրավունք ունեցողների կեսի պարտադիր մասնակցությամբ - Մ. Թ.): Ընտրությունները, համաժողովրդական քննարկումները կազմակերպվում և անց են կացվում Սահմանադրությամբ, հանրաքվեի մասին օրենքով և ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով: Սույն հոդվածում նշված ընտրովի անձանց թեկնածությունները ներկայացվում են անմիջապես ժողովրդի, ինչպես և կուսակցությունների, հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, ՀՀ ժողովրդական վերահսկիչների խորհրդի կողմից՝ սույն Սահմանադրությամբ և Ընտրական օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

Հոդված 5. Ընտրելու իրավունք ունեն ընտրության պահին 18 տարեկան դարձած ՀՀ բոլոր քաղաքացիները, բացառությամբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձանց: Ազատազրկման դատապարտված՝ պատիժը կրող անձինք օգտվում են ակտիվ (ընտրելու) ընտրական իրավունքից: ՀՀ քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքի իրականացման հարցում զույքային սահմանափակումների (ցենզերի) սահմանումն արգելվում է: Այդ իրավունքի սահմանափակումը կամ դրա իրականացմանը խոչընդոտելը քաղաքացու սեռից, ազգությունից, դավանանքից, կրոնական կամ քաղաքական համոզմունքներից ելնելով ինչպես նաև՝ օրենքով արգելված մյուս դեպքերում, պատժվում է վարչական և քրեական օրենսդրությամբ նախատեսված կարգով: Երկքաղաքացիություն ունեցող անձինք, ինչպես նաև օտարերկրացիները չեն կարող ընտրվել ՀՀ պետական իշխանության բարձրագույն օրենսդիր, գործադիր և դատական մարմիններում: Ընտրովի մյուս, ինչպես նաև նշանակվող պաշտոններում նրանց ընտրության և նշանակման պայմաններն ու կարգը սահմանվում է առանձին օրենքով:

Հոդված 6. Տեղական ինքնակառավարման մարմիններում կարող են ընտրվել ընտրության օրը 18 տարեկան դարձած, ընտրության նախորդած շրջանում՝ վերջին 5 տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ՀՀ բոլոր քաղաքացիները: Ազգային ժողովի պատգամավորներ, մարզպետներ (ընդհանուր իրավասության), առաջին ատյանի դատարանի դատավորներ կարող են ընտրվել ընտրության օրը 25 տարին լրացած և վերջին 10 տարում ՀՀ-ում մշտապես բնակվող ՀՀ բոլոր քաղաքացիները: ՀՀ նախագահ, սահմանադրական, վերաքննիչ, վճռաբեկ դատարանների դատավորներ կարող են լինել 30 տարեկան դարձած, վերջին 10 տարում ՀՀ-ում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիները, բացառությամբ, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, դիտավորյալ հանցագործությունների համար դատապարտված, ինչպես նաև նախնական կալանքի տակ գտնվող անձանց: Առաջին ատյանի (ընդհանուր իրավասության), վերաքննիչ և վճռաբեկ դատարանի դատավորները պետք է ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն և առնվազն 2 տարվա մասնագիտական-աշխատանքային ստաժ: Այլ սահմանափակումներ կամ գերատեսչական բնույթի խոչընդոտների սահմանումն ու ստեղծումն արգելվում է:

Հոդված 7. ՀՀ նախագահը, Ազգային ժողովի պատգամավորը, Սահմանադրական դատարանի անդամը, առաջին ատյանի դատարանի դատավորը, մարզպետը, տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված պաշտոնատար անձինք կարող են վաղաժամկետ ետ կանչվել քրեորեն պատժելի արարք կատարելու, ինչպես նաև «Պաշտոնատար անձի և պատգամավորի ետ կանչման մասին օրենք»-ով նախատեսված այլ հիմքերով: ՀՀ նախագահի, Ազգային ժողովրդի պատգամավորի և ընտրովի մյուս պաշտոնատար անձանց վաղաժամկետ ետ կանչելու կամ պաշտոնից հեռացնելու հարց կարող է հարուցվել նաև քաղաքացիական նախաձեռնության կարգով՝ անմիջապես ընտրողների կողմից:

Հոդված 8. Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանությունը կազմակերպվում է օրենսդիր, դատական, գործադիր իշխանությունների գործառույթների տարանջատման և օրենքի գերակայության սկզբունքների հիման վրա: Սահմանադրությանը հակասող օրենքներն ու մյուս իրավական ակտերը կիրառման ենթակա չեն: ՀՀ կնքած բոլոր միջազգային՝ միջպետական, միջկառավարական, միջգերատեսչական պայմանագրերը, համաձայնագրերը իրավական ուժ են ստանում միայն Ազգային ժողովի կողմից վավերացվելուց հետո: Նշված ակտերը, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին հակասելու դեպքում չեն կիրառվում:

ՀՀ սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և նրա նորմերը գործում են անմիջականորեն: ՀՀ-ում փոխառնված նախադեպային իրավունքը ՀՀ իրավական համակարգի մաս է կազմում միայն ՀՀ օրենքներում և մյուս իրավական ակտերում որպես կոնկրետ իրավական նորմ ամրագրվելուց հետո: Նախադեպային

իրավունքը չպետք է հակասի ՀՀ սահմանադրությանն ու օրենքներին:

Հոդված 9. Պատիժ, պատասխանատվություն սահմանող, այդպիսիք խստացող կամ սոցիալական մյուս հարաբերություններում մարդու վիճակը որևէ կերպ վատացնող օրենքները և ենթաօրենսդրական ակտերը հետադարձ ուժ չունեն: Քաղաքացու իրավունքներին, պարտականություններին և ազատություններին վերաբերող օրենքը փոփոխող կամ լրացնող ենթաօրենսդրական իրավական ակտերը կիրառման ենթակա չեն:

Հոդված 10. ՀՀ-ում թույլատրվում է բազմակուսակցականությունը: Անկախ զբաղեցրած պաշտոնից և աշխատանքի բնույթից, ՀՀ բոլոր քաղաքացիները կարող են միավորվել քաղաքական, հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների մեջ: Կուսակցությունները ստեղծվում և գործում են Սահմանադրությամբ և դրան համապատասխան ընդունած օրենքներով սահմանված կարգով: Կուսակցության, հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը կարող է արգելվել միմիայն Սահմանադրական դատարանի որոշմամբ՝ «Կուսակցությունների մասին օրենք»-ով նախատեսված հիմքերով: Նշված օրենքներով կարող է արգելվել նաև դատավորների, ոստիկանության աշխատակիցների ու զինծառայողների մասնակցությունը քաղաքական կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը: Կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները ստեղծվում են առնվազը 10 համախոհ. 16 տարին լրացած գործունակ ՀՀ քաղաքացիների՝ նույն բնակավայրում կամ հանրապետության տարբեր վայրերում բնակվող, կողմից իրենց ներկայացրած ծրագրի և կանոնադրության պետական գրանցմամբ՝ եթե դա չի հակասում ՀՀ Սահմանադրությանը: Կուսակցությունների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների ստեղծման հարցում այլ պայմանների, խոչընդոտների ստեղծումն արգելվում է:

Հոդված 11. ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է հողի, մյուս արտադրամիջոցների, նյութական և մտավոր արժեքների բազմակացութաձև սեփականության նկատմամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը՝ գյուղացիական, գյուղացիական-կոլտնտեսային, ֆերմերային, պետական, մասնավոր-անձնական սեփականության և «Սեփականության մասին օրենք»-ով նախատեսված այլ տարատեսակներով: Արգելվում է սեփականության իրավունքի օգտագործումն ի վնաս պետության և հասարակության ընդհանրական շահերի: Սեփականության իրավունքը դատարանով կարող է սահմանափակվել, եթե դրա օգտագործումը վնասում է շրջակա միջավայրի՝ բնության պաշտպանությանը և բնակչության առողջությանը: *Ամբողջ հասարակության և պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող պետական տերիտորիայի, ընդերքի, օգտակար հանածոների, կապի, հաղորդակցության, էներգո և հիդրոհամակարգերի, օդային և երկաթուղային տրանսպորտի, ռազմա-արդյունաբերական համալիրի և «Սեփականության մասին օրենք»-ով նախատեսված այլ*

միջոցների նկատմամբ պահպանվում է պետության բացառիկ սեփականության իրավունքը: Այդ օբյեկտների նկատմամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնավոր սեփականության իրավունքը, ինչպես նաև հողի նկատմամբ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը բացառվում է:

Հիշատակված օբյեկտները պետական-համաժողովրդական սեփականություն են: Այդ, ինչպես նաև «Սեփականության մասին ՀՀ օրենք»-ով պետական, համաժողովրդական սեփականություն դիտվող մյուս օբյեկտները օտարման ենթակա չեն: Բացառություններ կարող են արվել միայն սույն Սահմանադրությամբ և դրանից բխող «Սեփականության մասին ՀՀ օրենք»-ով նախատեսված հիմքերով ու կարգով՝ հողը ՀՀ-ում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիներին որպես սեփականություն տրամադրելու հարցում: Համաժողովրդական-պետական անօտարելի սեփականություն են հանդիսանում ազգային-պատմական, պատմամշակութային՝ հոգևոր և նյութական արժեքները: Դրանց օտարումը, վարձակալության հանձնումը, ինչպես նաև փչացումը, վերացումը, վնասումը սոցիալ-տնտեսական, քաղաքական-դասակարգային և ցանկացած այլ նկատառումներով, առաջացնում է քրեական պատասխանատվություն գործող օրենսդրությանը համապատասխան: Պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել պատմական հուշարձանների, պատմամշակութային արժեքների վերականգնման և պահպանման համար:

Հոդված 12. Սեփականության բազմակացութաձևության, մասնավոր սեփականության, ձեռներեցության, ազատ տնտեսական մրցակցության խթանման պայմաններում, պետությունը պարտավորվում է գործուն միջոցներ ձեռնարկել կանխելու հասարակության բոլոր խավերի. սոցիալական խմբերի, բանվորների, գյուղացիների, մտավորականության և սոցիալ-տնտեսական ապահովվածության անհամեմատ բարձր աստիճանում գտնվող դասերի միջև վտանգավոր սոցիալ-տնտեսական բևեռացումները, ապահովելու սոցիալական, տնտեսական, հարաբերական հավասարությունը սոցիալական բոլոր խմբերի միջև՝ սոցիալական դաշինքի ձևավորման և ամրապնդման, հասարակական անդորրի և համընդհանուր բարեկեցության նպատակով:

Հոդված 13. Արտաքին հարաբերությունների բնագավառում ՀՀ ղեկավարվում է խաղաղասիրական քաղաքականություն վարելու, պետությունների հետ բազմակողմ համագործակցություն ապահովելու, ինքնորոշման իրավունքի, ազգային-պետական ինքնիշխանության ճանաչման, խաղաղ գոյակցության և միջազգային-իրավական մյուս սկզբունքները հարգելու գործելակերպով:

Հոդված 14. ՀՀ պետական լեզուն հայերենն է: ՀՀ այլազգի քաղաքացիների և օտարերկրյա անձանց համար ապահովվում է մայրենի լեզվով ազատորեն հանդես գալու իրավունքը: ՀՀ-ում գործող օտարերկրյա կամ օտարալեզու դպրոցներում հայերենի իմացությունը և ուսուցումը պարտադիր է:

ՀՀ դրոշը եռագույնն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով:

ՀՀ զինանշանն է՝ կենտրոնում վահանի վրա պատկերված Արարատ (Մասիս) լեռը՝ Նոյան տապանով և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

Օրհներգը «Մեր հայրենիք»-ն է:

ՀՀ մայրաքաղաքը Երևանն է*:

ԳԼՈՒԽ 2
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 15. ՀՀ քաղաքացի կարող են լինել ՀՀ-ում ծնված կամ «ՀՀ քաղաքացիության մասին օրենք»-ով նախատեսված հիմքերով քաղաքացիություն ձեռք բերած անձինք: Հայաստանի Հանրապետությունում երկքաղաքացիություն կարող է թույլատրվել միայն առանձին քաղաքացիների՝ բացառիկ դեպքերում. պետության ընդհանրական շահերից ելնելով: Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց քաղաքացիություն շնորհելու բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ նախագահին: ՀՀ քաղաքացին քաղաքացիությունից կարող է զրկվել բացառիկ դեպքերում օրենքով հստակորեն սահմանված հիմքերով միայն՝ ՀՀ նախագահի որոշումով ու Ազգային ժողովի հաստատմամբ: Հայաստանի Հանրապետությունում ծնված, ազգությամբ հայ ՀՀ քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից: ՀՀ քաղաքացիները, անկախ ազգությունից, սեռից և հայացքներից, օժտված են հավասար իրավունքներով և պարտականություններով:

Հոդված 16. ՀՀ քաղաքացին ունի կյանքի՝ գոյատևման իրավունք: Պետությունը

---

* ՀՀ դրոշի, գերբի և հիմնի վերաբերյալ ևս մեր նկատառումներն ունենք, սակայն այստեղ՝ այս նախագծում, անհրաժեշտ չհամարեցինք դա արտացոլել: Նշենք միայն, որ օր՝. զինանշանի հարցում մեզ համար առավել ընդունելի է 18-րդ դարի 80-ական թվականներն ռուսական կառավարությանը ներկայացված հայ-ռուսական դաշնագրում տրված դրոշի և զինանշանի տարրերով՝ հասկանալի է, որոշակի փոփոխություններով, ՀՀ Գերբի և դրոշի ստեղծումը (Տե՛ս, Դիվան հայոց պատմութեան, Գիրք «Դ», Թիֆլիս, 1899, էջ 7732, տե՛ս, նաև ***Մ. Մ. Թելունց,*** «Հայկական առաջին սահմանադրությունը…», Ե., 2001, էջ 153): Կամ Խորհրդային Հայաստանի գերբը օր.՝ ավելի ջինջ է. պայծառ ու հստակ. եթե գերբի վրա զենք ու զրահներ կամ ահարկու գազաններ և գիշատիչ թռչուններ չկան դա բոլորովին էլ չի նշանակում թե այդ երկիրը, պետությունն ու ժողովուրդը անօգնական վիճակում սպասում են անմեղ գառան պես թե իրենց վիզը երբ են կտրելու… տեսեք օր.՝ ԽՍՀՄ գերբը ինչքան գեղեցիկ է ու ընկալելի… Ավատատիրական գերբերը կարելի է հանձնել պատմության թանգարաններ…

պարտավոր է բանական կառավարմամբ ապահովել մարդու և քաղաքացու բնական ու սոցիալական այդ իրավունքի իրականացումը՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

ՀՀ-ում մարդու կյանքը դիտվում է որպես բարձրագույն արժեք: Գույքային և քաղաքական շարժառիթներով հանցագործությունների համար մահապատժի կիրառումն արգելվում է: Մահապատիժը (կամ դրա երկընտրական միջոցը՝ օր.՝ ցմահ ազատազրկումը) որպես պատժի բացառիկ միջոց, կարող է կիրառվել միայն հայրենիքի դավաճանության, ցեղասպանության և այլ ծանր հանցագործությունների համար, եթե դրա հետևանով ուղղակի դիտավորությամբ քաղաքացիներին մահ է պատճառվել:

Հոդված 17. ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ինչպես իր անձնական շահերի, այնպես էլ հասարակական՝ հանրային-պետական շահերի պաշտպանության՝ այդ թվում պետական – իրավական շինարարության, օրենսդրության կատարելագործման հարցերով դիմումներով և առաջարկություններով դիմելու պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն և տեղական մարմիններին՝ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան պահանջելու իրավունքով:

Հոդված 18. ՀՀ բոլոր քաղաքացիներն օժտված են անձեռնմխելիության իրավունքով: ՀՀ քաղաքացին և նրա բնակարանը չեն կարող խուզարկվել առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի ու դատավորի որոշման և օրենքով նախատեսված բավարար հիմքերի: Անհիմն կարգով անձնական և բնակարանային խուզարկության ենթարկված քաղաքացին իր իրավունքների՝ անձեռնմխելիության խախտման համար, պաշտպանության նպատակով օգտվում է դատարան դիմելու իրավունքից: Ցանկացած շարժառիթով ՀՀ քաղաքացու արտադատական հետապնդումը, գաղտնի դիտարկումները, գաղտնալսումները, իրավապահ, անվտանգության և այլ մարմինների կողմից արգելվում են:

Նամակագրության, փոստ-հեռագրական և այլ հաղորդումների սահմանափակումները կարող են կատարվել միայն իրավասու իրավապահ մարմինների որոշմամբ՝ իրական հիմքերի առկայության դեպքում: Նման սահմանափակումները կասկածանքի հիման վրա արգելվում են:

Հոդված 19. ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի հանրապետություն մտնելու և հանրապետությունից ազատորեն դուրս գալու իրավունք: Այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն հանցագործություն կատարելու հետ կապված՝ օրենքով նախատեսված հիմքերով: ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների այդ իրավունքը կարող է ժամանակավորապես սահմանափակվել նաև ՀՀ նախագահի որոշմամբ՝ Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա՝ օրենքով՝ մասնառորապես միջազգային իրավունքով նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում:

Հոդված 20. ՀՀ քաղաքացու և ՀՀ տարածքում օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի համար՝ հանցագործություն կատարման մեջ կասկածանքով բերման ենթարկվելու, ձերբակալվելու, կալանավորվելու և որպես մեղադրյալ ներգրավելու պահից, անհապաղ, բայց ոչ ուշ, 24 ժամվա ընթացքում ապահովվում է փաստաբանի մասնակցության իրավունքը: Ձերբակալված անձինք ձերբակալման պահից 48 ժամվա ընթացքում պարտադիր կերպով ներկայացվում են նրանց ձերբակալման վայրի դատարան՝ ձերբակալման օրինականությունը ստուգելու և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով հարցը լուծելու համար: Նշված հարցով առաջին ատյանի դատարանի ընդունած որոշումը 15 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել վերադաս դատարանին:

Հոդված 21. Պատգամավորները և դիվանագիտական անձեռնմխելիությունից (իմունիտետից) օգտվող անձինք չեն կարող ձերբակալվել, կալանավորվել, որպես մեղադրյալ ներգրավվել և դատապարտվել առանց նրանց այդպիսի անձեռնմխելիություն շնորհած մարմինների նախնական համաձայնության: Ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարելու դեպքում նշված անձինք հանցագործության կատարման վայրից կարող են իրավասու մարմինների կողմից ձերբակալվել ոչ ավելի, քան 96 ժամ ժամկետով: Բացի նշված դեպքերից, ՀՀ և օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք կարող են դատապարտվել, այդ թվում՝ ազատությունից զրկվել միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ և դատավճռով: Արգելվում է գույքային՝ քաղաքացիա-իրավական պարտավորությունները չկատարելու համար ազատությունից զրկելը:

Հոդված 22. ՀՀ քաղաքացիներն ունեն բողոքի և համերաշխության. առանց զենքի՝ խաղաղ ցույցերի, ժողովների, հանրահավաքների, երթերի կազմակերպման և անցկացման իրավունք: Զանգվածային այդ միջոցառումների անցկացման անվտանգության ապահովման հարցերը կարգավորվում են ՀՀ օրենքով: Արգելվում է այդպիսի խաղաղ միջոցառումների անցկացմանը խոչընդոտելը պետանվտանգության, սահմանադրական կարգին վտանգ սպառնալու և այլ շարժառիթներով: Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները իրավասու չեն որոշելու քաղաքացիների այդ սահմանադրական իրավունքի իրականացման՝ մասնավորապես այդպիսի միջոցառումներ թույլատրելու կամ չթույլատրելու հարցը. նրանք պարտավոր են այդպիսի միջոցառումները նախաձեռնողներին զգուշացնել օրենքով նախատեսված պայմանների խախտման համար պատասխանատվության մասին: Այդպիսի միջոցառումներն արգելելու կամ սահմանափակելու որոշում կարող է ընդունվել միայն Սահմանադրական դատարանի կողմից բացառիկ դեպքերում՝ օրենքով նախատեսված բավարար հիմքերի առկայությամբ:

Հոդված 23. ՀՀ քաղաքացին ունի աշխատանքի իրավունք: Աշխատանքի իրավունքը ՀՀ քաղաքացու կյանքի՝ գոյատևման իրավունքի անկապտելի մասն է: Պետությունը պարտավոր է ապահովել այդ իրավունքի իրականացումը: Աշխատաժամանակը չի կարող լինել՝ չափահասների համար օրական 8, կանանց և անչափահասների համար՝ օրական 6 ժամից ավելի՝ թե՛ հնգօրյա, թե՛ վեցօրյա աշխատանքային շաբաթի դեպքում: Ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական՝ մասնավոր ձեռնարկություններում աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Արգելվում է աշխատանքային օրենսգրքով չնախատեսված լրացուցիչ՝ աշխատանքի իրավունքի իրականացման հարցում գերատեսչական և այլ խոչընդոտների ու պայմանների սահմանումը կամ ստեղծումը:

Հոդված 24. ՀՀ քաղաքացին անկախ պաշտոնից, իրավունք ունի աշխատանքի ընդունման հարցում ՀՀ աշխատանքային օրենսգրքով չնախատեսված արգելքների, պայմանների դեպքում, ինչպես նաև պաշտոնից, աշխատանքից՝ անհիմն ազատվելու, անհիմն վարչական, կարգապահական, քրեական պատասխանատվության ենթարկելու, ձերբակալվելու, կալանավորվելու դեպքում դիմելու պատասխանողի բնակության վայրի առաջին ատյանի կամ վերադաս դատարան աշխատանքի ընդունելու և աշխատանքում վերականգնվելու, պատճառած նյութական և բարոյական վնասը հատուցելու, իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պահանջով՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, «Պաշտոնատար անձանց անօրինական գործողությունները զանգատարկելու կարգի մասին ՀՀ օրենք»-ով, Սահմանադրությամբ և մյուս օրենքներով նախատեսված կարգով:

Հոդված 25. ՀՀ քաղաքացու համար ապահովվում է անվճար բժշկական օգնություն, բուժման իրավունքը՝ պետական բուժհաստատություններում: Պետությունը գործուն միջոցներ է ձեռնարկում վճարովի բուժհաստատություններում ըստ անհրաժեշտության բուժման համար առավել մատչելի պայմաններ ստեղծելու համար: Բնակչության **անվճար** բժշկական օգնությունն ու բուժումն ապահովելու նպատակով պետությունը պարտավորվում է հնարավորինս ընդլայնել **պետական** բուժական հաստատությունների ցանցը:

Հոդված 26. ՀՀ քաղաքացին օգտվում է պետական կրթական համակարգում **անվճար** տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթություն ստանալու իրավունքից: Պետությունը թույլատրում է նման կրթությունը նաև ոչ պետական ուսումնական հաստատություններում, ատիվորեն միջամտելով դրանցում ընդունվելու և սովորելու համար առավել մատչելի պայմաններ ստեղծելու ուղղությամբ՝ հավասարապես ճանաչելով պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ ավարտած անձանց կրթական և մասնագիտական աշխատանքի իրավունքը:

Հոդված 27. ՀՀ-ում ամուսնությունը, ընտանիքը, մայրությունը և մանկան պաշտպանությունը պետությունը դիտում է որպես ռազմավարական խնդիր՝ ամբողջությամբ վերցնելով իր հովանավորության տակ: ՀՀ-ում երաշխավորվում է ամուսնական հարաբերությունների ազատությունը՝ այդ թվում երկկնությունն ու բազմակնությունը՝ պետական համապատասխան մարմիններում ամուսնության պարտադիր գրանցման պայմանով: Ամուսնության պարտադիր գրանցման պայմանի չպահպանումը առաջացնում է վարչական և քրեական պատասխանատվություն օրենսդրությամբ նախատեսված հիմքերով ու կարգով:

Արգելվում է համասեռամոլության և մարմնավաճառության՝ որպես հայ ժողովրդի ազգային-պատմական արժեքներին անհարիր երևույթների, որևէ կերպ պաշտոնական ճանաչումը:

Հոդված 28. Պետությունը՝ պետբյուջեի հաշվին ապահովում է ՀՀ քաղաքացիների պետական և սոցիալական ապահովագրության իրավունքը:

Հոդված 29. ՀՀ քաղաքացիները «Զինապարտության մասին օրենք»-ին համապատասխան, պարտավոր են մասնակցել հանրապետության պաշտպանությանը: Պետությունը նպատակ է դնում համընդհանուր զինծառայության ժամկետները կրճատելու, համընդհանուր զինուսուցման պահպանմամբ, անցնելու պայմանագրային-պրոֆեսիոնալ մշտական զինված ուժերի ստեղծմանը: Ազգությամբ հայ երկքաղաքացիություն ունեցող ՀՀ քաղաքացիները ՀՀ-ում ենթակա են պարտադիր զինապարտության ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով: Օտարազգի ՀՀ քաղաքացիների զինապարտության հարցը լուծվում է «Օտարերկրացիների իրավական վիճակի» և «Քաղաքացիության մասին» օրենքներով:

Հոդված 30. ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնում և զինված ուժերի բարձրագույն հրամանատարության կազմում կարող են նշանակվել միայն կադրային բարձրագույն զինվորական կրթություն ունեցող անձինք:

Հոդված 31. Արգելվում է քաղաքական և կրոնական կազմակերպությունների գործունեությունը դպրոցում և բանակում: ՀՀ քաղաքացիների համար սահմանվում է խղճի, կրոնի, դավանանքի ազատություն՝ եկեղեցին պետությունից, պետությունը եկեղեցուց անջատ լինելու պայմաններում, Սահմանադրությամբ և մյուս օրենքներով նախատեսված հիմքերով:

Հոդված 32. ՀՀ քաղաքացիներն իրենց ազատություններից ու իրավունքներից օգտվում և իրենց պարտականությունները կատարում են օրենքով թույլատրելի սահմաններում՝ ձեռնպահ մնալով այլ անձանց վնաս պատճառելուց: ՀՀ քաղաքացիների հիմնական իրավունքների, պարտականությունների, ազատությունների, անձեռնմ-

խելիության երաշխիքների ամբողջական ցանկը սահմանվում է «ՀՀ քաղաքացու իրավական վիճակի մասին ՀՀ օրենք»-ով և դրան համապատասխան ընդունված մյուս օրենքներով: ՀՀ քաղաքացիներն օգտվում են նաև միջազգային - իրավական ակտերով՝ մարդուն ու քաղաքացուն վերապահված իրավունքներից և ազատություններից:

ԳԼՈՒԽ 3
ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ

Հոդված 33. ՀՀ նախագահն ընտրվում է Սահմանադրության 4-րդ հոդվածով և ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով:

Հոդված 34. ՀՀ նախագահն ընտրվում է 5 տարի ժամանակով: Նույն անձը երկու անգամ անընդմեջ չի կարող առաջադրվել ՀՀ նախագահ:

Ժողովրդի՝ ՀՀ ամբողջ բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակի. բարեկեցության էական բարձրացման, ազգային-պատմական և պետա-իրավական խնդիրների լուծման գործում բացառիկ ծառայությունների՝ ձեռք բերած համընդհանուր դրական արդյունքների համար նույն անձը երկու և ավելի անգամ կարող է առաջադրվել ՀՀ նախագահ անմիջապես ընտրողների կողմից՝ քաղաքացիական նախաձեռնությամբ՝ այդ թվում ՀՀ ժողովրդական վերահսկիչների խորհրդի միջոցով՝ օրենքով նախատեսված հիմքերով ու կարգով:

Հոդված 35. ՀՀ նախագահի ընտրության կարգը, գործունեությունը, իրավասության հարցերը կարգավորվում են Սահմանադրությամբ, ՀՀ ընտրական օրենսգրքով և «ՀՀ նախագահի իրավական վիճակի մասին ՀՀ օրենք»-ով: ՀՀ նախագահի առաջարկությամբ խորհրդարանի կողմից ընտրվում է (և ազատվում պաշտոնից) փոխնախագահ, որի իրավական վիճակը սահմանվում է «ՀՀ նախագահի մասինե օրենքով:

Հոդված 36. ՀՀ նախագահը՝ ՀՀ վարչապետի հետ միասին, գլխավորում է գործադիր իշխանությունը և վարչապետի հետ հավասարապես պատասխանատու է կառավարության գործունեության համար:

Հոդված 37. ՀՀ նախագահը կարող է ետ կանչվել ոչ պակաս 200 հազար ընտրողների նախաձեռնությամբ՝ նոր ընտրություն նշանակելու ձևով, ինչպես նաև Ազգային ժողովի նախաձեռնությամբ՝ պատգամավորների 1/3-ի կազմով. հարցը Ազգային ժողովի միջոցով համաժողովրդական քննարկման և քվեարկության դնելով: Այդպիսի դեպքում միաժամանակ նշանակվում են նախագահի նոր ընտրություններ: Գործող նախագահը, որի նկատմամբ ետ կանչման հարց է հարուցվել, իր պարտականությունների կատարումը հանձնում է Ազգային ժողովի նախագահին կամ փոխնախագահին:

Ետ կանչման հարցի հարուցումը չի խոչընդոտում ՀՀ նախկին նախագահի կողմից, միաժամանակ, նոր ընտրություններում առաջադրելու իր թեկնածությունը ՀՀ նախագահի պաշտոնում՝ ընդհանուր հիմունքներով:

Ազգային ժողովի կողմից ՀՀ նախագահի նկատմամբ անվստահության հաց կարող է առաջադրվել վերջինիս լիազորությունների ամբողջ շրջանում միայն մեկ անգամ: Մեկից ավելի անգամ նման հարց ծագելու անհրաժեշտության դեպքում, Ազգային ժողովն այն քննարկման է ուղարկում ՀՀ ժողովրդական վերահսկիչների խորհուրդ՝ հարցն անմիջապես ընտրողների լուծման ներկայացնելու միջնորդությամբ:

Քաղաքացիական նախաձեռնության կարգով. անմիջապես ընտրողների կողմից ՀՀ նախագահին անվստահություն հայտնելու հարցի առաջադրման սահմանափակում չի նախատեսվում: ՀՀ նախագահին անվստահության հայտնումն ու վաղաժամ ետ կանչման հարցի առաջադրումը կատարվում է սույն Սահմանադրությամբ և «ՀՀ - նախագահի իրավական վիճակի մասին օրենք»-ով նախատեսված հիմքերով ու կարգով:

Հոդված 38. ՀՀ նախագահը՝ Ազգային ժողովի հաստատմամբ, նշանակում և ազատում է վարչապետին, իսկ վերջինիս ներկայացմամբ՝ ՀՀ նախարարներին և գերատեսչությունների ղեկավարներին, բացառությամբ զինված ուժերի, ազգային անվտանգության և ՆԳ (ոստիկանության) նախարարների, որոնք նշանակվում և ազատվում են Ազգային ժողովի որոշմամբ՝ ՀՀ նախագահի ներկայացմամբ, Սահմանադրությունը և «ՀՀ նախագահի իրավական վիճակի մասին ՀՀ օրենք»-ին համապատասխան: Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ի մեծամասնությամբ ՀՀ նախարարներին և վարչապետին անվստահություն հայտնելու դեպքում, նախագահը պարտավոր է ազատել վերջիններիս: ՀՀ նախագահը իր նախաձեռնությամբ, նշանակում և ազատում է ՀՀ գլխավոր դատախազին: Վարչապետի և մյուս պաշտոններում նշանակման, հաստատման կամ ազատման հարցում անհամաձայնություն առաջանալու դեպքում, հարցը լուծվում է «ՀՀ նախագահի մասին» և «Ազգային ժողովի մասին» օրենքներով նախատեսված կարգով՝ հավասար թվով՝ նախագահի և ԱԺ-ի կազմած, անդամներ ունեցող հանձնաժողովի կողմից: Անհրաժեշտության դեպքում հարցը հանձնվում է Սահմանադրական դատարանի քննարկմանը, որի որոշումը պարտադիր է ու վերջնական:

Հոդված 39. Բոլոր միջազգային՝ միջպետական, միջկառավարական, միջազգային-միջգերատեսչական պայմանագրերը, համաձայնագրերը կարող են կնքվել միայն նախագահի կողմից և վավերական են ճանաչվում Ազգային ժողովի կողմից հաստատվելուց հետո:

Հոդված 40. ՀՀ նախագահը բավարար հիմքերի առկայության դեպքում, ՀՀ Ազգային ժողովի նախագահության և կառավարության համաձայնությամբ, երկրում հայտարարում է պատերազմական կամ արտակարգ վիճակ Սահմանադրությանը և «Ար-

տակարգ իրավիճակների մասին ՀՀ օրենք»-ին համապատասխան և անհապաղ ձեռնարկում նման վիճակից բխող միջոցառումներ, որպիսիք, ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում, ներկայացվում են Ազգային ժողովի հաստատմանը: Ձեռնարկվող միջոցառումների հարցով ՀՀ նախագահը անհապաղ ուղերձով դիմում է ժողովրդին:

Հոդված 41. ՀՀ օրենքներն ուժի մեջ են մտնում ՀՀ նախագահի հաստատումից հետո: Ընդունված օրենքն ստանալուց ոչ ուշ, մեկ շաբաթվա ընթացքում, ՀՀ նախագահը պետք է որոշի այն հաստատելու և հրապարակելու, մերժելու, փոփոխելու կամ լրացնելու նպատակով Ազգային ժողով վերադարձնելու հարցը: Կրկին անգամ ետ վերադարձված օրենքը, անկախ նախագահի՝ պահանջները մերժելուց կամ հարգելուց, ենթակա է հաստատման և հրապարակման ոչ ուշ 3 օրվա ընթացքում՝ ՀՀ նախագահի կողմից: ՀՀ նախագահն ընդունում է Սահմանադրությունից և մյուս օրենքներից բխող որոշումներ, հրամանագրեր և կարգադրություններ:

Հոդված 42. Ազգային ժողովի կողմից օրենքով նախատեսված իր պարտականությունները պատշաճ ձևով չկատարելու դեպքում, Ազգային ժողովի ընտրության և գործունեության երկրորդ տարուց սկսած, նախագահն իրավասու է ուղերձով դիմելու ժողովրդին՝ Ազգային ժողովի նոր ընտրությունների նշանակման անհրաժեշտության պարզաբանմամբ. «Ազգային ժողովի մասին օրենքով» նախատեսված հիմքերով ու կարգով նշանակելու Ազգային ժողովի նոր ընտրություններ արձակելով Ազգային ժողովը: Ընդ որում, վստահության քվե ստանալու նպատակով նախորդ Ազգային ժողովի պատգամավորները կարող են նոր ընտրություններում վերստին առաջադրել իրենց թեկնածությունները: Նոր ընտրությունների միջոցով Ազգային ժողովը արձակելու հարցը կարող է առաջադրվել Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ժամկետում մեկ անգամից ոչ ավել:

ԳԼՈՒԽ 4

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Հոդված 43. Ազգային ժողովը ՀՀ պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինն է լիազորությունների հնգամյա ժամկետով:

Հոդված 44. Ազգային ժողովը կազմված է 300 պատգամավորներից, որոնցից 150-ն ընտրվում է մեծամասնական ընտրական համակարգով՝ յուրաքանչյուր ընտրատարածքից Ազգային ժողովի մեկ պատգամավոր, 150-ը՝ համամասնական (ըստ կուսակցական ցուցակների) ընտրական համակարգով հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ ցուցակներով առաջադրված պատգամավորության թեկնածուների թվից: Մեծամասնական ընտրակարգով պատգամավորների թեկնածուների առաջադրման հարցում հաշվի է առնվում նաև նրա բազմաշերտ սոցիալական կազմի համամասնականության ապահովումը՝ ընտրական

օրենսգրքով նախատեսված կարգով:

Քաղաքացին պատգամավորության թեկնածու կարող է առաջադրվել կամ համամասնական կամ մեծամասնական ընտրահամակարգով՝ ըստ որում միայն մեկ ընտրատարածքում (ընտրական օկրուգում). նույն անձը չի կարող պատգամավորության թեկնածու առաջադրվել՝ ընտրվել միաժամանակ երկու ընտրատարածքներում[**]:

Հոդված 45. Ազգային ժողովի պատգամավորն ընտրված է համարվում, եթե ընտրությանը մասնակցել է մինչև քվեարկությունը ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ոչ պակաս 2/3-ը (կամ՝ ոչ պակաս կեսը) և եթե տվյալ պատգամավորության թեկնածուի կամ կուսակցական ցուցակի օգտին ձայն են տվել տվյալ օկրուգում քվեարկած ընտրողների պարզ մեծամասնությունը: Համամասնական ընտրահամակարգի համար ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել ձայների ավելի փոքր ընտրաչափ:

Հոդված 46. Ազգային ժողովի պատգամավորը կարող է ձերբակալվել ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեղադրանքով՝ կասկածանքով՝ անմիջապես հանցագործության կատարման վայրում: Ազգային ժողովի պատգամավորը չի կարող աշխատանքից ազատվել, կալանավորվել, որպես մեղադրյալ ներգրավվել և դատական պատասխանատվության ենթարկվել առանց Ազգային ժողովի նախնական համաձայնության: Պատգամավորը կարող է նաև վաղաժամկետ ետ կանչվել քաղաքացիական նախաձեռնության կարգով անմիջապես ընտրողների կողմից՝ «Ազգային ժողովի պատգամավորներին ետ կանչելու մասին ՀՀ օրենք»-ին համապատասխան:

Հոդված 47. Իր գործունեության ընթացքում Ազգային ժողովի պատգամավորը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ դրան համապատասխան ընդունված օրենքներով, համապետական շահերով՝ խստորեն հաշվի առնելով նաև իրեն ընտրողների

---

[*]Այսօր իրականում «մեծամասնական համակարգ» չկա. նայեք 4-րդ գումարման ԱԺ-ի պատգամավորների ցանկը՝ մեծամասնական համակարգով «ընտրված» բոլոր 41 պատգամավորներն էլ նույն այն անձինք են որոնք առաջադրվել և «ընտրվել» են համամասնական համակարգով՝ կուսակցությունների առաջադրած. տես օ. **ՀՀ Ազգային ժողով: Չորրորդ գումարման ուղեցույց**, «Անտարես», Երևան, 2009, էջ 175-179: Սա, անշուշտ, մեր նորանկախ «դեմոկրատական» պետականության միակ աչքակապությունը չէ.. Ըստ որում ԱԺ-ն դարձել է «ընտանեկան կապալի» «նոր եղանակ» այդ պատգամավորների ցանկում կան մի քանի եղբայրներ, հայրեր ու որդիներ ևն… Անշուշտ մեծ մասը նաև իրենց «բիզնեսից հրաժարված» նախկին միլիոնատերեր և միլիարդատերեր են…,

[*]*Մեծամասնական ընտրահամակարգով առաջադրվող պատգամավո-րության թեկնածուի համար ընտրական գրավ չի կարող սահմանվել:

շահերն ու պահանջները՝ պարբերաբար հաղորդում-հաշվետվություն ներկայացնելով իր ընտրողներին: Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորը չի կարող, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերից, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտամանկավարժական, ստեղծագործական աշխատանքից: Ազգային ժողովի համամասնական ընտրահամակարգով պատգամավոր չեն կարող առաջադրվել Սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, զինվորական ծառայողները, ՆԳ և Ազգային Անվտանգության աշխատակիցները, տնտեսական-ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք: Ազգային ժողովի մեծամասնական ընտրահամակարգով ընտրված պատգամավորները կարող են պատգամավորական գործունեությունը համատեղել իրենց այլ աշխատանքային՝ այդ թվում ձեռնարկատիրական գործունեության հետ՝ որը և հաշվի է առնվում պատգամավորական գործունեության համար պատգամավորի վարձատրության չափը սահմանելիս: Ազգային ժողովի պատգամավորն իր գործունեության ընթացքում ծագած հարցերով կամ իր ընտրողների պահանջով, իրավասու է համապատասխան հարցապնդմամբ դիմելու դատական և գործադիր իշխանության բարձրագույն և տեղական, իրավապահ և այլ մարմիններին, որոնք պար- տավոր են՝ ոչ ուշ, 15 օրվա ընթացքում պատասխանել պատգամավորին: Նույն ժամկետում է քննարկվում նաև Ազգային ժողովին ներկայացրած պատգամավորի օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած օրինագիծը, ինչպես նաև Ազգային ժողովին ուղղված դիմումներն ու հարցումները:

Հոդված 48. Ազգային ժողովն ընդունում է օրենքներ և որոշումներ: Ազգային ժողովի կողմից ընդունված որոշումները և օրենքները վավերական են համարվում, եթե դրանց ընդունման քվեարկությանը մասնակցել է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ոչ պակաս երկու երրորդը (2/3-ը): Օրենքը կամ որոշումն ընդունված է համարվում, եթե դրանց օգտին ձայն է տվել քվեարկությանը մասնակցած պատգամավորների պարզ մեծամասնությունը: Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է ՀՀ նախագահին, վարչապետին, ՀՀ գլխավոր դատախազին և Ազգային ժողովի պատգամավորներին և քաղաքացիներին՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով՝ օրենքով նախատեսված հիմքերով ու կարգով: ՀՀ Սահմանադրությունը և օրենքները պաշտոնապես կարող են մեկնաբանվել միայն Ազգային ժողովի կամ նրա նախագահության կողմից՝ համապատասխան որոշմամբ:

Ազգային ժողովը, ինչպես անմիջականորեն, այնպես էլ իր կողմից կազմավորվող՝ Վերահսկիչ պալատի և մյուս մարմինների միջոցով, հետևում է երկրի պետական բյուջեի կազմավորմանն ու կատարմանը, օտարերկրյա վարկերի ստացման և իրացման արդյունավետության ու օրինականության պահպանմանը, ինչպես նաև ընդունված օրենքների կատարմանը:

Հոդված 49. Ազգային ժողովը ընթացիկ գործունեություն իրականացնելու և անհրաժեշտ մյուս խնդիրների լուծման նպատակով, ընտրում է Ազգային ժողովի նախագահություն՝ կազմված նախագահից, նախագահի երեք տեղակալներից, մշտական հանձնաժողովների նախագահներից և այլ մարմիններից: Այդ մարմիններում ընդգրկվող անձինք ընտրվում և ազատվում են, այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ. հրաժարականով և այլն, քվեարկությանը Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ոչ պակաս երկու երրորդի մասնակցությամբ՝ ձայների մեծամասնությամբ, Սահմանադրության 48 հոդվածով նախատեսված կարգով:

Ազգային ժողովը կազմավորվում և գործում է Սահմանադրությամբ, Ընտրական օրենսգրքով, «Ազգային ժողովի կարգավիճակի մասին օրենք»-ով և իր Կանոնակարգով նախատեսված կարգով ու հիմքերով:

ԳԼՈՒԽ 5
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 50. ՀՀ Կառավարությունը գործադիր իշխանություն իրականացնող օրգան է, որն անմիջականորեն գլխավորում է վարչապետը*:

Հոդված 51. Կառավարությունն իր գործունեությամբ հաշվետու է Ազգային ժողովին և ՀՀ նախագահին:

Հոդված 52. Վարչապետը ղեկավարում է կառավարության ընթացիկ գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը:

Հոդված 53. Կառավարությունը՝ ՀՀ նախագահի համաձայնությամբ, կազմում և Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում իր գործունեության ծրագիրը: Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ՀՀ նախագահին և Ազգային ժողովին: Կառավարում է պետական սեփականությունը: Կառավարությունն ապահովում է ֆինանսա-տնտեսական, վարկային և հարկային միասնական քաղաքականության իրականացումը գիտության, կրթության, մշակույ-

---

* *Ծանոթ.: Ընդհանրապես, նախա·ահ-կառավարություն հարաբերության մեջ հստակություն կլիներ, եթե մենք թողնեինք նրանցից միայն մեկին կամ նախա·ահին նախա·ահական խորհրդով նախարարներով ևն, ·ործադիր իշխանություն իրականացնելու համար, կամ վարչապետին նախարարների խորհրդով. այլապես ստացվում է ·ործադիր իշխանություն իրականացնող 2 բարձրաստիճան անձինք՝ նախա·ահ և վաչապետ: Այսպիսի վիճակներում նախա·ահը կամ հիշեցնում է նախկին միապետ-թա·ավորին, կամ նրա «ստվերը». խորհրդանիշը: Այդ «երկու բարձրա·ույն ·ործադիր իշխանությունները» ապա·այում, մեր կարծիքով. «մեկ իշխանության» մեջ միավորման անխուսափելի կարիք կունենան՝ կամ նախա·ահ, կամ վարչապետ անվանումներով (Մ. Թ.):*

թի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության և մյուս բնագավառներում. անմիջականորեն կոորդինացնում և ղեկավարում է ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների գործունեությունը ապահովում հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և հասարակական կարգի պահպանման ուղղությամբ:

Հոդված 54. Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն 60 օր առաջ և կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունված ուղղումներով քվեարկության դրվի մինչև այդ ժամկետի ավարտը: Բյուջեի հաստատման առնչությամբ, կառավարությունը կարող է դնել իր հրաժարականի հարցը: Կառավարության հրաժարականի ընդունումը չի խոչընդոտում բյուջեի նախագծի քննարկումները շարունակելուն և ըստ էության որոշում կայացնելուն: Նշված և օրենքով նախատեսված մյուս հիմքերով կառավարության հրաժարականի կամ, օրենքով սահմանված դեպքում, կառավարության փոփոխության ժամկետում, Ազգային ժողովը՝ իր նախաձեռնությամբ, հրաժարականից ոչ ուշ՝ մեկ ամսվա ընթացքում, անցկացնում է կառավարության գործունեության համալիր ստուգում՝ արդյունքները ներկայացնելով Ազգային ժողովի քննարկմանը:

Կառավարության հրաժարականի դեպքում, ոչ ուշ, մեկ շաբաթում կազմավորվում է նոր կառավարություն: Այդ ընթացքում կառավարության պարտականությունները կատարում է նախագահը: Կառավարության նկատմամբ անվստահության հարց կարող է առաջադրվել Ազգային ժողովի կողմից՝ նաև «ՀՀ կառավարության մասին օրենք»-ով նախատեսված մյուս դեպքերում:

Կառավարությունն իր գործունեությունն իրականացնում է իր կողմից ընդունվող որոշումների, կարգադրությունների և հրահանգների միջոցով՝ գործող օրենսդրությանը համապատասխան: Կառավարության ընդունած իրավական ակտերն ստուգվում են վարչապետի կողմից:

ԳԼՈՒԽ 6
ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 55. ՀՀ-ում արդարադատությունն իրականացվում է միայն դատարանների կողմից գործող օրենսդրությանը համապատասխան: Արտակարգ և հատուկ դատարանների ստեղծումն արգելվում է: Բոլոր ատյանների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորները, չեն կարող առաջադրվել պատգամավոր կամ լինել որևէ կուսակցության անդամ:

Հոդված 56. Առաջին ատյանի (ընդհանուր իրավասության) դատարանների դատավորները և ատենակալները ընտրվում են անմիջապես բնակչության կողմից ընդհանուր, ուղղակի, հավասար ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Վճռաբեկ և վերաքննիչ դատարանների անդամները նշանակվում են ՀՀ նախագահի կողմից՝ Ազգային ժողովի հաստատմամբ, լիազորությունների հինգ տարվա ժամկետով: Քրեորեն պատժելի արարքներ կատարելու դեպքում, դատավորները և ատենակալները կարող են վաղաժամկետ ետ կանչվել քաղաքացիական նախաձեռնությամբ՝ Սահմանադրությանը և «Դատավորի կարգավիճակի մասին օրենք»-ին համապատասխան: Նույն օրենքով կարգավորվում են նաև դատավորների խրախուսման և կարգապահական պատասխանատվության հարցերը:

Հոդված 57. Առաջին ատյանի (ընդհանուր իրավասության) դատարաններում քրեական բոլոր գործերը լսվում են մեկ դատավորի և երկու ժողովրդական ատենակալների մասնակցությամբ: Այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնցով կարող են նշանակվել պատիժ ազատազրկման ձևով՝ 10 տարուց ավելի ժամկետով, ցմահ ազատազրկում կամ մահապատիժ*, գործերի դատաքննությունը կատարվում է 12 երդվյալ ատենակալների կազմով: Առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործերը լսվում են միանձնյա: Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում հասարակական, պետական մեծ կարևորություն ունեցող քաղաքացիական գործերը լսվում են դատավորների և երկու ժողովրդական ատենակալների կազմով, դատախազի պարտադիր մասնակցությամբ:

Քրեական և քաղաքացիական բոլոր գործերով առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ ատյանների կայացրած դատավճիռները, վճիռները և որոշումները վճռաբեկության և հսկողական կարգով կարող են բողոքարկվել և գանգատարկվել դատախազի, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի, սրանց օրինական ներկայացուցիչների, դատապարտյալի, վերջինիս օրինական ներկայացուցիչների և փաստաբանի կողմից:

Հոդված 58. Սահմանադրությանը օրենքների և մյուս իրավական ակտերի համապատասխանության հարցը որոշելու նպատակով ստեղծվում է Սահմանադրական դատարան, որը գործում է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակում:

Հոդված 59. Սահմանադրական դատարանը կազմված է 24 անդամից, որից 12-ը՝ պահեստային դատավորներ են: Սահմանադրական դատարանի անդամները ընտրվում են անմիջապես բնակչության կողմից՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրա-

* Եթե այդպիսին նախատեսվի:

կան իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Սահմանադրական դատարանի դատավորը պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը: Քրեորեն պատժելի արարք կատարելու, հասարակական և հակաբարոյական այլ վարքագիծ դրսևորելու դեպքում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է վաղաժամկետ ետ կանչվել ընտրողների նախաձեռնությամբ և Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների 2/3-ի կազմով ետ կանչման հարց առաջադրելով: Սահմանադրական դատարանի անդամի մահվան, պարտականությունների կատարման անհնարինության, օրենքով նախատեսված մյուս խոչընդոտների առկայության դեպքում, նրան փոխարինում է պահեստային դատավորը: Սահմանադրական դատարանի անդամի ետ կանչումը՝ դատավորի պաշտոնից արձակումը, բոլոր դեպքերում կատարվում է անմիջապես բնակչության կողմից կատարված ընտրության արդյունքներով:

Հոդված 60. Սահմանադրական դատարանի անդամ կարող են լինել 45 տարին լրացած բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող, ՀՀ-ում ծնված, ազգությամբ հայ ՀՀ այն քաղաքացիները, որոնք վերջին 10 տարում մշտապես բնակվում են ՀՀ-ում և ունեն ոչ պակաս 5 տարվա մասնագիտական՝ իրավաբանական աշխատանքային ստաժ:

Հոդված 61. Սահմանադրական դատարանն իրավազոր է, եթե գործերի քննությանը մասնակցում է դատարանի անդամներից ոչ պակաս 9-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Հոդված 62. Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն ՀՀ և օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ֆիզիկական և իրավաբանական անձինք, ՀՀ նախագահը, վարչապետը, պատգամավորները, ՀՀ գլխավոր դատախազը, Մարդու իրավունքների պաշտպանը և ժողովրդական վերահսկիչների խորհուրդը:

Սահմանադրական դատարանը օրենքով նախատեսված կարգով քննարկում է ինչպես անձնական, այնպես էլ հանրային շահերի պաշտպանությանն ուղղված քաղաքացիների դիմումները և առաջարկությունները:

Հոդված 63. Սահմանադրական դատարանը՝

– որոշում է օրենքների, Ազգային ժողովի, ՀՀ նախագահի, կառավարության որոշումների, հրամանագրերի, կարգադրությունների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ իր որոշմամբ դրանք վերացնելով կամ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչելով: Նույն կարգով, մինչև միջազգային պայմանագրի վավերացումը, որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

– լուծում է հանրաքվեների, հանրապետության նախագահի, Ազգային ժողովի

պատգամավորների, դատավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը, անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում հանրապետության նախագահի, պատգամավորության և դատավորի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները,

– իր նախաձեռնությամբ առաջադրում է ՀՀ նախագահի վաղաժամկետ ետ կանչման հարցը, ինչպես նաև եզրակացություն է տալիս Ազգային ժողովի կողմից ՀՀ նախագահին ետ կանչելու համար առաջադրված հարցի վերաբերյալ, լուծում է ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքների և օրինակա շահերի խախտման վերաբերյալ բողոքները, եթե դրանք առնչվում են անմիջականորեն Սահմանադրությանը հակասող իրավական ակտերի հետ,

– լուծում է Սահմանադրական դատարանի անդամին որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու հարցը,

– լուծում է ՀՀ նախագահի, կառավարության և Ազգային ժողովի միջև ծագած տարաձայնություններն ու վեճերը. իրականացնում է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

– Ընդունում և քննարկում է անձնական և հանրային շահերի պաշտպանության, այդ թվում օրենքների սահմանադրականության՝ իրավականության, օրենսդրության կատարելագործման հարցերով ստացված քաղաքացիների դիմումներն ու առաջարկությունները՝ օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

Սահմանադրական դատարանը գործերը՝ վարույթ է ընդունում և քննարկում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ՝ օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

ԳԼՈՒԽ 7
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Հոդված 64. Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական կենտրոնացված համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Գլխավոր դատախազը նշանակվում է ՀՀ նախագահի կողմի՝ 5 տարի ժամկետով: Տարածքային (շրջանային, համայնքային, քաղաքային, մարզային են) դատախազները նշանակվում և ազատվում են ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ 5 տարի ժամկետով:

Դատախազների պաշտոնում կարող են նշանակվել 25 տարին լրացած, բարձրագույն իրավաբանական կրթություն և առնվազն երկու տարվա մասնագիտական՝ իրավաբանական աշխատանքի փորձ ունեցող ՀՀ քաղաքացիները: Մասնագիտական աշխատանքի փորձ չունեցող իրավաբանները դատախազության համակարգ են ընդունվում օրենքով նախատեսված փորձաշրջանով:

Հոդված 65. ՀՀ գլխավոր դատախազը կարող է ազատվել պաշտոնից Հանրապետության նախագահի նախաձեռնությամբ՝ քրեորեն պատժելի արարք կատարելու կամ դատախազական ակնհայտ անարդյունավետ գործունեության համար: Դատախազի նկատմամբ քրեական հետապնդում և քրեական գործ կարող է հարուցվել պաշտոնից ազատվելուց հետո միայն: Աշխատանքից անհիմն արձակված ՀՀ գլխավոր դատախազը, տարածքների ստորաբաժանումների դատախազները, նրանց տեղակալները, օգնականներն ու քննիչները պաշտոնից և աշխատանքից ազատվելուց ոչ ուշ մեկամսյա ժամկետում, վերականգնման պահանջով կարող են դիմել ՀՀ Գերագույն դատարանին (վերաքննիչ, վճռաբեկ ևն):

Հոդված 66. ՀՀ գլխավոր դատախազը և ստորադաս դատախազները բարձրագույն հսկողություն են իրականացնում ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչությունների, հիմարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման, տարածքային մարմինների և քաղաքացիների կողմից օրենքների ճշգրիտ և միատեսակ կատարման նկատմամբ՝ Սահմանադրությանը և «Դատախազության մասին օրենք»-ին համապատասխան: Հետաքննության և նախաքննության մարմինների գործունեության, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ բարձրագույն հսկողության իրականացումը և քրեական հետապնդումը՝ պետական մեղադրանքի առաջադրումը, դատախազական մարմինների բացառիկ լիազորությունն է: Ինչպես ընդհանուր հսկողական իր գործառույթն իրականացնելիս, այնպես էլ քրեական և քաղաքացիական դատավարությանը մասնակցելով, դատախազը հանդես է գալիս որպես իրավունքի կողմ՝ հավասարապես պաշտպանելով ինչպես պետության, այնպես էլ իրավաբանական մյուս անձանց և քաղաքացիների շահերը՝ գործող օրենսդրության սահմաններում: Դատախազը պարտավոր է բողոքարկել պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց օրինական շահերն ու իրավունքները խախտող իրավական ակտերն ու գործողությունները: Այդ գործողությունների և իրավական ակտերի դեմ բողոքը դատախազը բերում է պատասխանողի բնակության վայրի դատարան կամ վերադաս դատարան: Դատախազական գործունեության ընթացքում Սահմանադրությանը հակասող օրենքների և օրենքներին հակասող իրավական ակտերի հայտնաբերման դեպքում, ՀՀ գլխավոր դատախազը կարող է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ այդպիսիք անվավեր ճանաչելու պահանջով, ինչպես նաև՝ օրենսդրության կատարելագործման նպատակով, օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու Ազգային ժողովում:

Հոդված 67. Դատախազության գործունեության հարցերը, քրեական, քաղաքացիական դատավարությունում, ուղղիչ աշխատանքային, վարչական և օրենսդրության մյուս բնագավառներում՝ օրենքների ճշգրիտ և միատեսակ կիրառման ուղղությամբ,

սահմանվում են ինչպես «Դատախազության մասին ՀՀ օրենք»-ով, այնպես էլ ՀՀ քրեական, քրեական դատավարական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, աշխատանքային, վարչական իրավախախտումների, ուղղիչ աշխատանքային և ճյուղային մյուս օրենսգրքերով ու օրենքներով նախատեսված սահմաններում:

ԳԼՈՒԽ 8
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հոդված 68. ՀՀ-ն բաժանվում է մարզերի, գյուղական և քաղաքային տարածքների (շրջանների համայնքների): Մարզերում ընդհանուր կառավարումն իրականացվում է ընտրովի մարզային խորհուրդների և մարզպետների կողմից, քաղաքներում և գյուղերում համայնքների ընտրովի մարմինների կողմից: Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են անմիջապես բնակչության կողմից՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, լիազորությունների 5-ամյա ժամկետով: Նույն անձը երկու անգամից ավել՝ անընդմեջ չի կարող ընտրվել տարածքային և տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար:

Տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքներում, գյուղերում, ավաններում, քաղաքատիպ բնակավայրերում տեղական նշանակության օրենքով նախատեսված բոլոր հարցերը լուծում են անմիջապես տեղական բնակչության կողմից ընտրվող մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով, որոնք կարող են վաղաժամկետ ետ կանչվել՝ ընտրողների վստահությունը չարդարացնելու և օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Մարզպետները կոորդինացնում են պետական իշխանության գործադիր մարմինների գործունեությունն ու իրականացնում կառավարության տարածքային քաղաքականությունը օրենքով նախատեսված կարգով:

Հոդված 69. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են «Տարածքային կառավարման և ինքնակառավարման մասին ՀՀ օրենք»-ով:

ԳԼՈՒԽ 9
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉՆԵՐ*

* Ժողովրդական վերահսկիչների ինստիտուտի նախատիպը հունական էֆորներն են և ոչ թե խորհրդային շրջանի ժող. վերահսկիչները, իսկ ժողովրդական վերահսկիչների ընտրակարգի համար հիմք են ընդունվել «Որոգայթ փառաց»-ի ընտրահամակարգի սկզբունքները (Մ.Թ.):

Հոդված 70. Գործադիր իշխանության ընթացիկ գործունեության վրա ժողովրդական վերահսկողություն իրականացնելու համար լիազորությունների 5 տարի ժամկետով ընտրվում են 12 ժողովրդական վերահսկիչներ (յուրաքանչյուր մարզից 1 վերահսկիչ, Երևան քաղաքից՝ 2)**: Ժողովրդական վերահսկիչներ կարող են ընտրվել 50-ից ոչ պակաս տարիք ունեցող ՀՀ քաղաքացիները: Ժողովրդական վերահսկիչներն իրենց լիազորությունները կարող են իրականացնել մինչև 70 տարին լրանալը: Ժողովրդական վերահսկիչներ չեն կարող լինել նախկինում դիտավորյալ հանցագործությունների համար դատապարտված, պատշաճ կրթություն չունեցող և դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:

Հոդված 71. Ժողովրդական վերահսկիչների թեկնածություններն առաջարկվում են անմիջապես բնակչության կողմից՝ տարածքային ժողովներում: Ըստ որում, յուրաքանչյուր մարզի (շրջանի) տարածքում գտնվող 100-ից ոչ պակաս տնտեսություն ունեցող ամեն մի գյուղից տվյալ բնակավայրի մշտական բնակիչներից առաջադրվում է ժողովրդական վերահսկիչի մեկ թեկնածու երկընտրական սկզբունքով, ըստ որում, անմիջապես բնակչության կողմից առաջադրված և ձայների մեծամասնություն ստացած՝ մեկից ավելի թեկնածուներից, վիճակահանությամբ, թողնվում է մեկը: Առաջադրման և վիճակահանության արդյունքների իսկությունը հաստատվում է նույն՝ տարածքային ժողովի որոշմամբ՝ վավերացված տեղական ինքնակառավարման մարմնի կնիքով:

100-ից պակաս տնտեսություն ունեցող գյուղերը՝ բնակավայրերը, ժողովրդական վերահսկիչների ընտրության համար միավորվում են ընտրությանը մասնակցելու իրավունք ունեցող (100 և ավելի տուն՝ ծուխ ունեցող) բնակավայրերի բնակչության հետ:

Տարածքային ժողովներում թեկնածուների առաջադրման ձայնի իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

Հոդված 72. Տվյալ մարզի մեջ մտնող յուրաքանչյուր բնակավայրից (գյուղ, թաղ, համայնք Երևան քաղաքում) ընտրված ժողովրդական վերահսկիչների մեկական թեկնածուներն ուղարկվում են ժողովրդական ներկայացուցիչների մարզային համագումար, որտեղ վիճակահանությամբ ընտրվում է ՀՀ ժողովրդական մեկ վերահսկիչ: Ընտրությունների կազմակերպումն իրականացնում են տեղական ինքնակառավարման և մարզային մարմինները: Յուրաքանչյուր մարզից 1-ական ժողովրդական վերահսկիչները միասին կազմում են 12 հոգուց բաղկացած ՀՀ ժողովրդական վերահսկիչների խորհուրդ:

ՀՀ ժողովրդական վերահսկիչները կարող են վաղաժամկետ ետ կանչվել միայն անմիջապես բնակչության կողմից՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով. ժո-

---

** 70-րդ հոդվածում նշված ժողովրդական վերահսկիչների թվը կարելի է մեծացնել՝ օր.՝ 12-ի փոխարեն՝ 24 ևն:

ղովրդի վստահությունը չարդարացնելու դեպքում, տարածքային ժողովների երկու երրորդի պահանջով՝ «Ժողովրդական վերահսկիչների մասին ՀՀ օրենք»-ով նախատեսված հիմունքներով ու կարգով: Ժողովրդական վերահսկիչի մահվան կամ լիազորությունների կատարման անհնարինության դեպքում, ոչ ուշ մեկամսյա ժամկետում, տվյալ ընտրատարածքում (որտեղից առաջադրվել է ժողովրդական վերահսկիչը), անց են կացվում նոր ընտրություններ: Ժողովրդական վերահսկիչները կարող են ձերբակալվել, կալանավորվել, վարչական և քրեական պատասխանատվության ենթարկվել միայն իրենց ընտրողների նախնական համաձայնությամբ՝ «Ժողովրդական վերահսկիչների մասին ՀՀ օրենք»-ով նախատեսված կարգով:

Հոդված 73. ՀՀ ժողովրդական վերահսկիչները վերահսկողություն են իրականացնում գործադիր իշխանության՝ ՀՀ նախագահի, Նախարարների խորհրդի, նախարարությունների, այդ թվում՝ արդարադատության մարմինների և գործադիր իշխանության տեղական մարմինների կողմից, ՀՀ Սահմանադրությամբ և մյուս օրենքներով սահմանված պահանջների ճշգրիտ և միատեսակ կատարման, նշված և մյուս պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնական պարտականությունների կատարման նկատմամբ:

Ժողովրդական վերահսկիչը, ինչպես առանձին, այնպես էլ՝ ի դեմս ՀՀ ժողովրդական վերահսկիչների խորհրդի, օժտված է օրենսդրական նախաձեռնության իրավունքով: Օժտված լինելով օրենսդրական նախաձեռնության իրավունքով և ներկայացնելով ժողովրդի շահերը, ժողովրդական վերահսկիչը պարտավոր է խստորեն, հաշվի առնելով ՀՀ բնակչության, ժողովրդի իրական՝ օբյեկտիվ պահանջներն ու խնդիրները, ղեկավարվելով սոցիալական հավասարության ու արդարության սկզբունքներով, ժողովրդական կարիքների լուծման, մարդու և քաղաքացու իրավունքների ազատու- թյունների և օրինական շահերի պաշտպանության նպատակով, համապատասխան օրինագծեր ներկայացնելու ՀՀ Ազգային ժողով, ինչպես նաև պահանջներ առաջադրելու գործադիր իշխանության, արդարադատության բարձրագույն և տեղական մարմիններին: Անկախ զբաղեցրած պաշտոնից, բոլոր պաշտոնատար անձինք պարտավոր են անվերապահորեն կատարել ՀՀ ժողովրդական վերահսկիչի բոլոր օրինական պահանջները:

Ժողովրդական վերահսկիչն իրավասու է առաջադրելու իր պաշտոնական պարտականությունները պատշաճ ձևով չկատարող՝ ընտրովի պաշտոնատար անձանց, այդ թվում Ազգային ժողովի պատգամավորներին, ետ կանչման, նաև նշանակվող պաշտոնատար անձանց զբաղեցրած պաշտոններից ազատելու հարց այդպիսիք օրենքով նախատեսված կարգով դնելով ժողովրդական քննարկման և քվեարկության, կամ հարցը ներկայացնելով համապատասխան իրավասու մարմնին:

ՀՀ ժողովրդական վերահսկիչների խորհուրդը պարտավոր է կազմակերպել և ղեկավարել ՀՀ նախագահի, դատավորների, պատգամավորների և մյուս պաշտոնատար անձանց վաղաժամկետ ետ կանչելու նպատակով և օրենքով նախատեսված մյուս

դեպքերում, անմիջապես բնակչության կողմից օրենքով սահմանված կարգով դրսևորված քաղաքացիական նախաձեռնության իրականացման գրոծընթացը: Ժողովրդական վերահսկիչը հաշվետու է միայն ժողովրդին և իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Սահմանադրությամբ, օրենքներով ու ժողովրդի պատվիրաններով:

Հոդված 74. Ժողովրդական վերահսկիչների խորհրդի 3 հոգուց կազմված նախագահությունը կանոնակարգում է վերահսկիչների ընթացիկ գործունեությունը, աշխատանքի բաժանումը նրանց միջև, ղեկավարում նրանց գործունեությունը: Ժողովրդական վերահսկիչների խորհուրդը կազմված է իր իսկ՝ խորհրդի կողմից ընտրվող նախագահից, անդամներից և խորհրդի գործառույթի իրականացման համար անհրաժեշտ մյուս ատրիբուտներից:

Խորհուրդը՝ տեղերում մշտական վերահսկողություն իրականացնելու համար, կարող է ունենալ իր լիազոր ներկայացուցիչները: ՀՀ նախագահի և կառավարության կոլեգիալ մարմինների նիստերին խորհրդի անդամի՝ ժողովրդական վերահսկիչի մասնակցությունը պարտադիր է: Խորհրդի անդամները՝ ինչպես անձամբ, այնպես էլ իրենց լիազոր ներկայացուցիչների միջոցով կարող են մասնակցել նախարարությունների, գերատեսչությունների և գործադիր իշխանության տեղական մարմինների կոլեգիալ նիստերին:

Ժողովրդական վերահսկիչների խորհուրդն իր մշտական ներկայացուցիչն ունի ՀՀ Ազգային ժողովում: Ժողովրդական ներկայացուցիչը (վերահսկիչը) իրավասու է մասնակցելու Ազգային ժողովի բոլոր նիստերին, այդ թվում դռնփակ: Հիշատակված մարմինների աշխատանքներին մասնակցող ժողովրդական վերահսկիչն ունի խորհրդակցական ձայնի իրավունք: Ժողովրդական վերահսկիչներն ինչպես անձամբ, այնպես էլ իրենց կողմից կամ պահանջով կազմված հանձնաժողովների, մասնագետների միջոցով, գործադիր իշխանության բարձրագույն և տեղական մարմիններում, նրանց ենթակա և ոչ ենթակա (անկախ սեփականության ձևից) հիմնարկ-ձեռնարկություններում, կազմակերպություններում կարող են, անհրաժեշտության դեպքում, կատարել ընդհանուր հասարակական, համապետական, ժողովրդական շահերից բխող ստուգումներ և ուսումնասիրություններ:

Հոդված 75. ՀՀ նախագահը, ՀՀ կառավարությունը՝ ժողովրդական վերահսկիչներին՝ նորմալ գործունեության համար, պարտավոր են ապահովելու անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և բավարար այլ պայմաններ:

Հոդված 76. Ժողովական վերահսկիչների խորհուրդն իր կազմից 5 տարի ժամկետով ընտրում է *մարդու իրավունքների պաշտպան,* որը՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքին համապատասխան ինչպես անձամբ, այնպես էլ իր տարածքային ներկայացուցչությունների միջոցով վերահսկողություն է իրականացնում

ներպետական և միջազգային իրավական ակտերով ամրագրված Մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության նկատմամբ:

ԳԼՈՒԽ 10
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հոդված 77. Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների, հիմնարար ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար ստեղծվում են փաստաբանական ծառայություններ, միություններ: Փաստաբանների միության անդամ կարող են լինել բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձինք, բացառությամբ դիտավորյալ հանցագործության համար չմարված կամ չվերացված դատվածություն ունեցող, կամ դատարանով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց: Անհրաժեշտության դեպքում՝ օրենքով նախատեսված հիմքերով և կարգով, որպես պաշտպաններ՝ հանցագործության մեջ մեղադրվող անձանց խնդրանքով՝ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կարող են մասնակցել նաև կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի մերձավոր ազգականները և այլ անձինք՝ փաստաբանի իրավական վիճակով: Փաստաբանական ծառայությունը ազատ՝ ոչ պետական իրավապաշտպան ծառայություն է: Փաստաբանական ծառայությունը կարող է իրականացվել ինչպես միություններում միավորվելու ձևով, այնպես էլ անհատական եղանակով: Փաստաբանական ծառայությունը ենթակա է պարտադիր պետական գրանցման: Փաստաբանական ծառայությունը իրականացնելու համար այլ արգելքներ, սահմանափակումներ, խոչընդոտող և այլ պայմաններ սահմանելը, քան նախատեսված է սույն հոդվածով արգելվում է:

Փաստաբանական ծառայությունն իրականացվում է Սահմանադրությանը, «Փաստաբանության մասին ՀՀ Օրենք»-ին և գործող օրենսդրությանը համապատասխան: Պետությունն ապահովում է փաստաբանների անվտանգությունն ու փաստաբանական ծառայության ազատությունը՝ օրենքով նախատեսված կարգով:

ԳԼՈՒԽ 11
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Հոդված 78. Երկրում ստեղծված հնարավոր անիշխանության վիճակում, երբ զանգվածային սոցիալական շարժման կամ այլ գործընթացների արդյունքում անվստահություն է հայտնվում պետական իշխանության և կառավարման (գործադիր) բոլոր բարձրագույն մարմիններին կամ ստեղծվում անիշխանության վիճակ. ժողովրդական

վերահսկիչների խորհուրդն անհապաղ ստանձնելով ՀՀ նախագահի և կառավարության գործառույթների կատարումը ոչ ուշ երկշաբաթյա ժամկետում կազմում է նոր կառավարություն, որի վրա ժամանակավորապես դրվում է ՀՀ նախագահի և կառավարության օրենքով նախատեսված պարտականությունների կատարումը մինչև երկրի օրենսդիր և գործադիր իշխանության ձևավորումը ընտրության միջոցով: Ժամանակավոր կառավարությունը ստեղծվում է յուրաքանչյուր մարզից բաց քվեարկությամբ՝ Սահմանադրության 72-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ ժողովրդական ժողովներում ընտրված 12-ական ներկայացուցիչներից և նախկին (կամ գործող) Ազգային ժողովի պատգամավորներից՝ համատեղ ժողովում (համագումարում):

Ժամանակավոր կառավարությունը ոչ ուշ եռամսյա ժամկետում կազմակերպում է երկրի բարձրագույն իշխանության մարմինների՝ Ազգային ժողովի և ՀՀ նախագահի ընտրություն: Նորընտիր Ազգային ժողովի ու հանրապետության նախագահի կողմից Սահմանադրությամբ նախատեսված կարգով կազմավորվում է նոր կառավարություն:

ԳԼՈՒԽ 12

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒՄԸ

Հոդված 79. ՀՀ Սահմանադրությունը կարող է փոխվել, նրանում փոփոխություններ, լրացումներ կարող են կատարվել կամ նոր Սահմանադրություն կարող է ընդունվել միայն համաժողովրդական քննարկմամբ և քվեարկությամբ: Նոր Սահմանադրության ընդունման գործող Սահմանադրության փոփոխման. նրանում փոփոխություններ, լրացումներ կատարելու հարց կարող են հարուցել ժողովրդական վերահսկիչները, ՀՀ նախագահը, կառավարությունը, Ազգային ժողովը. ինչպես նաև առանձին պատգամավորներ և պատգամավորական խմբեր, խմբակցություններ՝ օրենսդրական նախաձեռնության կամ օրենքով նախատեսված այլ եղանակներով. նաև քաղաքացիները՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով: Օրենքին համապատասխան ընդունված միջնորդությունների առնչությամբ Ազգային ժողովի և ՀՀ նախագահի կողմից ժո-ղովրդական ներկայացուցիչների մասնակցությամբ կազմված Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովը կազմակերպում է համաժողովրդական քննարկում և քվեարկություն:

Սահմանադրության կամ նրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծն ընդունված է համարվում եթե դրա օգտին քվեարկել է, ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների ոչ պակաս երկու երրորդը:

Հոդված 80 (Անցումային դրույթներ). Սույն Սահմանադրությունն ընդունվելուց հետո ոչ ուշ՝ մեկ տարվա ժամկետում անցկացվում են ՀՀ նախագահի, Ազգային ժողովի և մյուս ընտրովի պաշտոնյաների նոր ընտրություններ. նշված ժամանակահատվածում՝ մինչև նոր ընտրությամբ իշխանության մարմինների ձևավորումը գործում է նախկին Սահմանադրությամբ և դրան համապատասխան ընդունված օրենսդրությամբ սահմանված կարգը:

Հեղինակ՝ **Մ. Մ. ԹԵԼՈՒՆՑ.**
Իրավագետ, պատմական գիտությունների թեկնածու
իրավագիտության դոցենտ
արդարադատության առաջին դասի խորհրդական

Մեր կողմից կազմված ՀՀ Սահմանադրության մյուս նախագծերի մասին գրախոսականները տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ. 22.09.2001 թ., «Օրենք և իրականություն», 2002, N 6, 6 մարտի, 2004, փետրվար N 3-4. ըստ մեր հիշատակած հետևյալ աշխատությունների ***Մ. Մ. Թելունց,*** Հայկական առաջին Սահմանադրությունը. «Որոգայթ փառաց»-ը և ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը: ՀՀ Սահմանադրությունը: ՀՀ Սահմանադրության նոր նախագծեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2001, ***Մ. Մ. Թելունց,*** Սահմանադրական փոփոխությունների նախագիծ. այո՞, թե՞ ոչ, «Հրազդան» հրատ., Երևան, 2003 և ուրիշ.: Այս նախագծում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ՝ հետագայում: Բոլոր, այդ թվում այս նախագծում էլ պահպանվել են հիմնական բովանդակությունն ու սկզբունքները (Մ. Թ.):

21.10.2025թ.